

ԵՐԵՎԱՆԻ ԿՈՆՍՏԱՆԴՆՈՒԹՅԱՆ ԳՐԱԳՐԱՐԱՆ

# ՄՇԿԿ

Հ Ի Մ Ն Ա Գ Ի Բ Գ Ի Բ Գ Ի Բ Գ Ի Բ Գ Ի Բ Գ Ի Բ

Տարեկան գինը 10 ռուբլի. կես տարվանը 6 ռուբ.  
Առանձին համարները 5 կոպեկով.  
Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.  
Մեր հասցեն. Тифлисть, Редакция „Мшакъ“.  
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.  
Տ է Լ է Ք օ ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ  
(բացի կիրակի և տօն օրերէն).  
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.  
Յայտարարութիւնների համար վճարում են  
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպեկ.  
Տ է Լ է Ք օ ն № 253.

Այն բոլոր անձերին և հիմնարկութիւններին, որոնք արտայայտել էին ցաւակցու-  
թիւն երգուեալ հաւատարմատար

## ՆԵՐՍԷՍ ԱՍԼԱՆԵԱՆ ԱԹԱՔԵԿԵԱՆՑԻ

մահվան առիթով, հանդուցեալի զաւակները յայտնում են իրանց խորին շնորհակա-  
լութիւնը:

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Զօրաբանակների կազմը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒ-  
ԹԻՒՆ. Հնագիտական պեղումները. Նամակ  
Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ  
ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պատերազմի շուրջը. Նամակ  
Պարսկաստանից. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱՍ-  
ԳԻՐԵՆԲ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

### ԶՕՐԱԲԱՆԱԿՆԵՐԻ ԿՕՉՄԸ

Մենք ասացինք, որ ճիշտ կերպով յայ-  
տնի չէ զօրաբանակներում գտնվող զօր-  
քերի իսկական թիւը: Բայց հաւանական  
ենթադրութիւններ կարելի է անել այն  
տեղեկութիւնների հիման վրա, որոնք  
մինչև այժմ լոյս են տեսել քաղաքական  
մամուլի էջերում: «Ք. Յ.» լրագրի կար-  
ծիքով, Մանջուրիայում և Կովաստանի թե-  
րակողում առ 20 մայիսի հասցունական  
զօրքի թիւը հետևեալն է. առաջին զօրաբա-  
նակում, Կուրդիկի հրամանատարութեամբ  
122,000, երկրորդ զօրաբանակում, Օլուի  
հրամանատարութեամբ 89,000 և երրորդ  
զօրաբանակում, Նոզուրի հրամանատարու-  
թեամբ 89,000 հոգի: Երեք մանջուրա-  
կան զօրաբանակներում ընդամենը պէտք  
է հաշվել 296,000 հոգի զօրք 1036 թըն-  
դանօթով, իսկ լրացուցիչ վաշտերով  
300,000 հոգի զօրք, 1060 թնդանօթնե-  
րով:

Ներկայումս մանջուրական պատերազ-  
մական բեմի վրա աչքի ընկնող գործո-  
ղութիւնները տեղի ունեն մարտի  
Նոզուրի գրաւած շրջանի մօտերում:  
Տապօնական զօրքին դիմադրում է սու-  
սաց կողմից գեներալ Շաակիբբեկի զօր-  
քը, որ ունեցաւ մի քանի ընդհարումներ  
հասցունացիների հետ և յետ մի քանի  
Վաֆանդօից դէպի հարաւ, այն է դէպի  
Վաֆանդօն և նոյն իսկ մինչև Պուլան-  
դեան: Մայիսի 22-ին ուսնները գրաւել  
էին Վաֆանդօնի շրջանը, իսկ հասցու-  
նացիները կենտրոնացել էին Պուլանդեան  
կայարանի մօտերում և հակառակորդնե-  
րի առաջապահ վաշտերը ձորերում հեռու  
էին միմեանցից միայն 6—8 վերատով:

Յամաքի զօրքի շարժումների հետ զու-  
գընթաց հասցունական հաւատարմը սկսել  
է շարժումներ անել Լազուրնեան թերա-  
կողու արևմտեան ափերում: Տապօնական  
հաւատարմը մայիսի 25-ին երևաց Գայ-  
ջօուի մօտերում: Այդ հաւատարմի մէջ  
կային մի գրանակիր, 7 մեծ նաւ, 9 աւե-  
լի փոքր նաւեր և 9 սկանանաւ: Մովսէսի  
30 վերատ տարածութեան վրա,  
սկսած Գայջօուից մինչև Սէնիւջէն,  
մանջուրական երկաթուղին կարող է վը-  
տանդի մէջ լինել ծովի կողմից, որովհե-  
տև երկաթուղու գիծը հեռու է ավից  
միայն 4—6 վերատ և ուրեմն հաւատարմը,  
որ կարող է ուղարկուել երկաթուղու  
գիծը 6—8 վերատից, հարաւարտութիւն  
կուենայ էական վնաս հասցնել այդ գծին:

Ինչ վերաբերում է նոր զօրքեր ամ-  
իջնցնելուն Լազուրնի արևմտեան ափե-  
րում՝ դա կախված է գործուհեղութեան կազ-  
մակերպութիւնից, արագ է յանկարծակի  
գործողութիւնից: Բիցգիլիօ մօտ, ինչպէս  
յայտնի է, աշդիվայ մի անգամից 10,000  
հոգի զօրք ամի իջնցնել: Բայց ամեն ան-  
գամ էլ հեշտ չէ արգելիս աշդուլութեամբ

գործելը, որովհետև այժմ սուսաց խու-  
զարիւր վաշտերը հետևում են հակառա-  
կորդի գործողութիւններին:

Այսօրվայ հեռագրերը տալիս են տե-  
ղեկութիւններ սուսական և հասցունական  
զօրքերի ընդհարումների մասին Լազուր-  
նեան թերակողու վերև յիշած կէտերում:

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ

IV

Եզրակացնել այս բոլորից կարելի է միայն  
այն, որ մեր պատմութեան համար պեղում-  
ները անազին նշանակութիւն ունեն, և էրանց  
պէտք է շարունակել եռանդով, սխտեմ դարձ-  
նելով: Պատահականութիւնը իւրաքանչիւր  
գործի մէջ միայն թուութեան և անհասկա-  
ցողութեան նշան կը լինէր: Եթէ մի փոքրիկ  
թոււր էջմիածնի մօտ այդքան զարմանալի,  
այդքան թանգազին արդիւնքներ տուց, մենք  
չը պէտք է մտանաւք, որ ունենք ուրիշ, ա-  
ւելի կարևոր հնութիւններ, որոնք սպասում  
են պեղումներին:

Նոյն Արարատեան դաշտի վրա գտնվում են  
մեր հնութեան մէջ հոչակված այնպիսի քա-  
ղաքական խոշոր կենտրոններ, ինչպէս են  
Արմաւիրը, Արտաշատը, Գուրգը: Իրանք այժմ  
հաւատարմի են հողին, բայց, անկասկած,  
նոյն այդ հողի տակ ունեն շատ հետաքրքրա-  
կան գանձեր: Նոյն իսկ Զուարթնոցի կը ըն-  
կերակցող բլուրները, անկասկած, մի հին քա-  
ղաքի փլատակներն են պահում իրանց մէջ:

Ան որքան գործ կայ: Հարկաւոր է մեծ  
աշխատանք, հարկաւոր է տոկոսութիւն, հար-  
կաւոր են մանաւանդ մեծ միջոցներ: Ունենք  
այդ բոլորը: Ունենք վարդապետ կարողացել  
է գլուխ բերել իր գործը մենակ, առանց էջ-  
միածնի օգնութեան, թէև նրա գործարած  
միջոցներից մի քանիսը երբեք չէ կարելի հա-  
ւանութեան կամ նոյն իսկ անտարբերութեան  
արժանի համարել: Կայ, սակայն, մի նանգա-  
մանք, որ, մեր կարծիքով, կարող է ազգայ-  
աշխատանքների համար միակ ազանով միջո-  
ցը դառնալ: Պետերբուրգի հնագիտական յանձ-  
նաժողովը, որի թողալութեամբ կատարվում  
են պեղումները, այնքան զբաղական միջոց-  
ներ չունի, որ կարողանայ բոլոր ծախսերը  
իր վրա վերցնել: Մտնու է մասնաւոր մարզ-  
կանց աշակցութիւնը: Եւ այդ միջոցից լա-  
օգտվել է Մաշիկ վարդապետը: Զուարթնոցի  
այցելուների թիւը, ինչպէս ասել ենք, միշտ  
մեծ է: Եւ այցելուները, ինչպէս այդ կարելի  
է իմանալ յատուկ այդ նպատակով կազմված  
մատանից, տալիս են նուէրներ՝ գործը շա-  
րունակելու համար:

Ներկայումս Մաշիկ վարդապետը թոյլտու-  
թիւն է ստացել ուրիշ տեղերում էլ պեղում-  
ներ կատարելու: Այդ գործի համար նա, ինչ-  
պէս երևաց «Մշակի» մէջ նրա տպած նամա-  
կից, արդէն ստացել է մի գումար մասնաւոր  
մի մարդուց: Այսպէս, ուրեմն, հնագիտական  
պեղումները, մի բոլորովին նոր գործ մեզա-  
նում, այնքան սկսում են հասարակութեան  
ուշադրութիւնը գրաւել, որ կարելի է լինում  
մասնաւոր անձանց օժանդակութեամբ գործ  
կատարել: Պէտք է օգտվել այդ արամարտու-  
թիւնից, իսկ օգտվել կարելի է՝ ստացածի  
փոխարէն լուրջ և կանոնաւոր աշխատանք  
ցույց տալով:

Յարմար է, որ անս երկար տարիներ են,

ինչ մեր պատմական անցեալը ներկայացնող  
յիշատակարանները սկսել են նոր գնահատու-  
թեան ենթարկուել: Կատարվել է և այժմ էլ  
կատարվում է մի ամբողջ յեղափոխութիւն,  
որի մէջ, ի հարկէ, շատ սրբութիւններ և  
կուրքեր ջարդվում, անյայտանում են, տեղի  
տալով նոր ճշմարտութիւններ: Մեր հին  
պատմութիւնը կատարելապէս կերպարանա-  
փոխվում է: Եւ որպէս զի գոնէ այս նոր կեր-  
պարանքի մէջ նա պարունակէ իր մէջ որքան  
կարելի է շատ ճշմարտութիւններ, հարկաւոր  
է շատ նոր փաստեր դուրս հանել, տալ զի-  
տութեան ձեռքը: Պետեմները պիտի տան այդ  
փաստերը:

Ով մի անգամ տեսել է Անին, առանց հա-  
զէտ լինելու էլ իմացած կը լինի, որ նրա  
պատմութեան մեծ մասը ծածկված է հողի  
տակ: Այդ բանը փայլուն կերպով ապացուցել  
է պրօֆէսոր Մառը, 1893-ի ամառը մի քանի  
պեղումներ կատարելով Անիի մէջ: Նախով  
այդ պեղումներին, կարելի է հաստատապէս  
ասել, որ հողի տակից պիտի դուրս գայ հայ-  
կական մի ամբողջ Պոսպէտ, եթէ շարունակ-  
վեն պեղումները:

Եւ նրանք կը շարունակվեն, ինչպէս ար-  
դէն իմացան «Մշակի» ընթերցողները: Ինքը,  
տարածաբան գիտնականը, 11 տարուց յետոյ  
նորից իր ձեռքն է առել իր սիրած գործը և  
արդէն ուղևորվեց Անի, ուր այս ամառ պիտի  
սկսէ պեղումները: Պ. Մառ յոյս ունի, որ մի  
երեք-չորս տարվա ընթացքում արդէն շատ  
բան կը լինի կատարված Անիի մէջ: Իսկ թէ  
ինչ կը լինեն նրա ղեկավարութեամբ կատար-  
վող պեղումները, այդ արդէն կարելի է իմա-  
նալ հէնց նրանից, որ յարգելի պրօֆէսորը  
զեն 1893 թվականին կատարած իր հետազո-  
տութիւններով բոլորովին նոր խօսք է մտ-  
քել Անիի մասին եղած գիտական գրականու-  
թեան մէջ 1):

Կաւեղած չը կայ, որ պ. Մառը այս անգամ,  
ինչպէս նաև հետևեալ տարիները, այնքան մօ-  
տիկ կը ծանօթանայ հոչակաւոր աւերակների  
հետ, այնքան շատ փաստեր կը հանէ նրանց  
ձոցից, որ կը ապ միջ մեր հին մայրաքաղա-  
քի ներքին կեանքի ամբողջ նկարագրութիւնը:  
Մի ամբողջ դար հարիւրաւոր օտար թէ հայ  
այցելուներ հիացել են Անիի աւերակների վրա,  
զբել են հարիւր ու մի բան: Բայց հիացումնը  
ներքե, փաստարարութիւնները չեն կարողացել  
մի փոքրիկ բան աւելացնել այն կցկտոր,  
աղբատիկ տեղեկութիւնների վրա, որոնք  
յայտնի են Անիի մասին մեր մատենագիրնե-  
րից և աւերակների արձանագրութիւններից:  
Այժմ պ. Մառը ցույց է տալիս, թէ ինչպէս  
պէտք է հասկանալ և դիտարկել հնութիւնը:  
Մեզ մնում է ամեն տեսակ աշակցութիւն  
ցույց տալ պեղումներ կատարողներին, որոնք  
աշխատում են մի մի ձրագներ վառել մեր  
անցեալը ծածկող խաւարի մէջ...

### ՆԱՍՏԱԿ ԽՐԱՎՈՒԹՅԱՆ

Եկատարելու արար, մայիսի 29-ին  
«Մշակի» մէջ Արմաւիրից մի թղթակցութիւն կար,  
որտեղ պ. Շահանի ասելով, ձեռքարկված են ջուլա-  
մերիցի խաչապատեր, որոնցից մէկը իբր թէ կել է  
Եկատարելու արար ինչանց ստորագրութիւն գուրս կը-  
ղելու: Յայտնում եմ ի գիտութիւն հասարակութեան,  
որ ինձ մօտ և ոչ մի խաչապող կեղծ չէ և չի էլ հա-  
մարձակի գուրս, քանի որ ես նրանց շտերին ճանա-  
չում եմ զեւ զպոթակահնութեան տարիներէն: Պ. Շա-  
հանը զարմացել է ջուլամերիցիների վրա, որոնք ցը-  
ղել են իրաւաստանի մէջ և հաւածված ժողովրդի ա-  
նուան տակ կեղծում են միմաւր մարդկանց: Բայց  
ինչպէս պէտք է գործնաւոր պ. Շահանը, երբ իմանայ,  
որ թիֆլիսեցի կանաքն էլ սկսել են խաչապողութեամբ  
պարագելու և աւելի վարպետ կերպով:  
Անցեալ տարի թիֆլիսեցի մի աղիկի՝ Սուհուրկեան  
ազգայնական մեր յայտնի դրամատուրգ պ. Գաբրիել  
Սուհուրկեանի ազգայնական շահագործելով, Բագրից  
մինչ նոր-Նախիջևան հասաւ և իր անվերջ զանգատով  
ու լացով հասարակութեան կողովակց:

1) Պրօֆէսոր Մառի համառոտ նկարագրութիւնը  
տպված է «Врацкая Помощь» ժողովածուի երկրորդ ար-  
ագրութեան մէջ:

Մայիսի 20-ին եկա մի տիկին, բաւական ինտելի-  
գենտ հագնված, տարիքը մօտ 45, ազգանունը Յարու-  
թիւնեան: Տիկինը թիֆլիսի Հաւաքար քաղաքամա-  
սիցն է: Նախընտանց Աստուածատուրի աղջիկը ներ-  
կայացաւ ինձ աչքերը վըր արտասուքով և սկսեց իր  
ցաւերը նկարագրել, ասելով, որ երկու փոքր երեխայ  
ունի, որոնք մնացել են ստանց ուսման, ունի և մի 23  
տարեկան աղջիկ, որ անբարդ է մնացել ուսում չունե-  
նալու պատճառով և հազար մի տեսակ ցաւեր, ստաց,  
որ պէտք է տանէ երեխաներին և մէկին տեղաւորել  
Ներսիսեան դպրոց, միւսին էջմիածնի ձեռնարան: Այդ  
կէնը ձեռքին և ոչ մի թուղթ չունէր, բացի իր պա-  
կի վկայականից, որ տուել է թիֆլիսի էջմիածնեցոց  
եկեղեցու Բարսեղ քահ. Տէր-Բարսեղեանը: Իր ցաւերը  
պատմելուց և թուղթը ցույց տալուց յետոյ ասաց, որ  
եսու ձեռք չէի ձանաչում, ինչ պ. Չամբարեանը ուղարկեց  
ձեռք մօտ», և այնպիսի վարպետութեամբ խօսեց Չա-  
մարեանի և իմ յարաբերութեան մասին, որ չէի կարող  
հաւատ չընծայել նրան:

Այդ օրը ես դրական պատասխան չը տուի, բայց իր  
ներկայութեամբ մի բաց նամակ գրեցի պ. Չամբարե-  
անին և յանդիմանեցի, որ 50, 60 ռուբլու համար ինչ՞  
կնոջը Արմաւիրից վեր է առնում և ուղարկում Եկա-  
տարից: Նամակը ստի ծառային, որ տանէ պօստ,  
տիկինը թախանձեց, որ իբրև տան, ինքը տանէ. չը  
մտնանամ տեսլու, որ բաց նամակի վրա կայ իմ պատ-  
կերը եւ ինչ կը մտածեմ, թէ տիկինը իմ պատկերով  
պէտք է միմաւր ժողովրդին թախանէ:  
Նախընտանց աղջիկը նամակ գրեց ծոցը, փոխանակ  
կայարան գնալու, ընկնում է անէ տուն, պատմում է,  
էրբ 17 օրը երկուսեր է ծողովել և տանում է թիֆլի-  
սի սրբանոց յանձնելու: Մեր ծխակաշիկները լսելով ու-  
րբելի ցաւալի նկարագրութիւնը, տեսնելով նրա ան-  
կեղծ արտասուքը, և մի և նոյն ժամանակ ձեռքին իմ  
պատկերը գրութեանը հանդերձ, թէև չեն կարողան,  
ամենքը առատ նուէրներ են տալիս:

Գրանի մի օրինակներ և երիտասարդներ իմանալով  
այսպիսի անձնագրի անձնագրութեան մասին, հետա-  
քրքրվում են տեսնելու և ծանօթանալու, մինչև անգամ  
էթէ հար է մի քիչ աւելի օգնելու, որ խախտուեն  
տիկինը: Շատ փառաւոր յետոյ գտնում են կայարա-  
նում, բայց ոչ մեծակ այլ երկու ուրիշ անձանց հետ:  
Մանօթիւնում են հետները, խօսում են: Մտաւորութեան  
էթէ օրինակներ և երիտասարդները կաակածում են,  
քաղաքակրթութեամբ հասկացում են, որ էթէ թղթեր  
ունի ցույց տալ: Տիկինը հետուից ցույց է տալիս իր  
պատկի վկայականը և իմ պատկերս, այնպէս նամակս,  
բայց չէ տալիս կարգալու: Վերջապէս յայտնելով է  
կեղծութիւնը: Օրինակները և երիտասարդները լինելով  
թիֆլիսեցի պատկեր, բարեւ են համարել չը դիմել տարի-  
կանութեան, և այդպէս օձիքը ազատել է մեր Նախ-  
ընտանց աղջիկը:

Մայիսի 22-ի գեղեղական գնացողով կեաւ տեղա մի  
վարդապետ, Տիֆլիսի Պոսպէտի անձնագրութեան և ուղ-  
ղակի գնաց Գուրգ քահ. Զարաբանի մօտ իջաւ: Հե-  
տաքրքրութիւնից միւս օրը գնացել է կեղեղեցի, որ ի-  
մանում ինչ վարդապետ է: Տէր-Գուրգը ծանուցումից  
երեսաց, որ վարդապետը եկել է Պարսկաստանի Սոսե-  
փանոս Նախակալի վանքից պնտելով որքանօքի հա-  
մար ժողովարարութիւն անելու: Ինքը կարճատակ  
միջուրը և բեկերը բիշ չէի կարողայ անցնելու Սոսե-  
փաւը գլխին, ծաղկապ փլուրն ձգած վրան՝ փաստուր  
կերպով կանգնել էր աւագ դասում: Ես հասայ պատա-  
րագի սկզբներին. երեկ ստուգուեան ժամանակութեան  
մասնակցած պէտք է լինել, թանաքը այնպէս երեսաց  
պատարագից յետոյ բարեկցի և դուրս եկաւ: Այդ նոյն  
օրը չը դիմում քանաններէն որը ստանում է մի նա-  
մակ որի մէջ յայտնում են, որ վարդապետը ունեցած  
թղթերը կեղծ են: Պահանջում է գործակալը վարդա-  
պետից վաւերական թղթեր, վարդապետը ցույց է տա-  
լիս, և տեսնում են իսկապէս, որ կեղծ է: Թէ ինչ են  
ստոււ, ինչ են խօսում, չը գիտում, միայն վարդապետը  
իսկոյն թողնում հետմտում է: Մայիսի 28-ին կար-  
գում ենք «Մշակի» մէջ Կորին վարդապետի ստորա-  
գրութեամբ մի յայտարարութիւն, որի մէջ յայտնվում  
է որ ոչ էթ վարդապետ է կրած, այլ մի աւագակ, որ  
յանդերն էլ այս լուսաւորեալ դարի մէջ պղպղիս խաղ  
խաղաւու: Խնդրեմ ասելք, այժմ ուր հաւատալ և ողոր-  
մութիւն տալ:

### Գարեկին քահ. Բագրատարեանց

Յունիսի 4-ին, Կովկասի կառավարչապետի  
օգնականի նախագահութեամբ, նահանգապետու-  
նիքի և Անդրկովկասի վարչութեան ուրիշներ-  
կայացուցիչներին, նահանգապետ և գաւառական  
պետականների պարագլուխների մասնակցու-  
թեամբ նշանակված է գլխաւոր կառավարչա-  
պետի խորհուրդի նիստը: Այդ նիստի զբաղ-  
մունքի առարկան է ժամանակաւորապէս պար-  
տական գիւղացիները բնական սուբեքի փո-  
խանակ փոխարին հարկ նշանակելու հարցը:

Մայրաքաղաքի լրագրիչների ասելով, Մոս-  
կույի քաղաքային վարչութիւնը զբաղված է

յարմարուր ընակարաններ որոնելու հարցով: Այդ ընակարանները պատրաստվում են մօտ օրերս Մօսկվայում սպասվող 500 երիտասարդների համար: Պրոֆէսոր Մառ, մի քանի օր թիֆլիսում ուսումնասիրութիւններ կատարելուց յետոյ, երէկ ճանապարհ ընկաւ դէպի Ալեքսանդրօպօլ և Անի:

«Торж. Пром. раз.» լրագրում տպւած է «С. Пет. Вѣд.» լրագրի № 135-ում գետնոված էր մի նկատուածքներ, որ արտասովոր միւս լրագրիցներում էս, և որի մէջ հարցրոված էր, թէ Եւրոպայի վերջին փոխառութեան թղթերն արագ տարածվում են Մօսկվայի դրամատէրերի մէջ: Ֆինանսների մինիստրութեան մէջ Մօսկվայի բարձր կոմիտէից ստացված տեղեկութիւններին համաձայն, այդ լուրը բոլորովին անհիմն է և, հակառակէն, թղթերի արտադրութեան արդիւնք: Մօսկվայի դրամատէրերը ոչ-խառը չտեսնելով մասնակցել են ոչ թէ Եւրոպայի բաց արժու փոխառութեանը, այլ ուսուական վերջին 500-ամեց փոխառութեանը, որ բաց է արված Եւրոպայի դէմ մղվող պատերազմի կարիքներին համար. դրա պատճառով էլ սովորաբար կոչվում է այդ փոխառութիւնը «Եւրոպայական»:

Կովկասի կայսերական ընկերութեան վարչութիւնը ներկայ յունիսի 1-ին Կովկասի գեղարտեստական ընկերութեան խորհրդին ուղարկել է ուսերէն, հայերէն, վրացերէն և թուրքերէն լեզուով ժողովրդական քերթիկներ ըստ (մոլոքեր), ինֆլուէնցայի, շերմի, խօրբայի, արիւնային փորձութեան և խեղդողներին օգնութիւն տալու մասին: Ուղարկելով յիշված թղթերին, բժշկական ընկերութեան վարչութիւնը խնդրում է գիւղատնտեսական ընկերութեան խորհրդից կարգադրութիւն անել տարածելու նրանց ժողովրդի մէջ և այդ ճանապարհով օժանդակել երկրի ազգաբնակչութեան մէջ բժշկական և առողջապահական հասկացողութիւնների զարգացմանը:

«Ноб.» լրագիրը հարցրում է, որ Պետերբուրգի քաղաքային խորհրդին մէջ հարց է յարուցված Պետերբուրգը հեռախօսով կապել Ֆինլանդիայի մի կետրօնական քաղաքի հետ և դրանով մայրաքաղաքը դնել հեռախօսական յարաբերութեան մէջ ամբողջ Ֆինլանդիայի հետ, որովհետեւ այդ երկրի բոլոր քաղաքները վաղուց արդէն իրար հետ կապված են հեռախօսային խիտ ցանցով, այն ինչ Պետերբուրգը դեռ համարեալ ոչ մի այդ օրինակ ցանց չունի. նա միայնակ է միայն Մօսկվայի և մի երկու ուրիշ կարևոր կետերի հետ:

Միջնակարգ դպրոցների բարենորոգութիւնը, որ ստացված է արդէն գիմնադրանքի առաջին 5 դասարաններում, ներկայ ուսումնական տարում մտցվում է և 6-րդում. յունարէնը այլևս դադարում է պարտադիր առարկայ լինելուց և նրա փոխարէն ներմուծվում են երկու նոր լեզուներ:

«Ноб.» լրագիրը հարցրում է մի ընտրող փաստ Միբրի արդէն բաւական կուլտուրական նախնայնորի կեանքից: Այդ փաստն հետեւեալն է: Իրկուտսկի նախկին գեներալ-նահանգապետը, մշտական դոկտորութիւնների հանդիպելով Եսկուտսկի շրջանի և Ենիսէյսկի ու Իրկուտսկի նահանգների հեռուստր մասերի համար բժշկներ գտնելու գործում, պատշաճաւոր իշխանութեանը դիմում էր արել, որ Արևելեան Միբրիայի համար նշանակված ուսանողական թղթակները (ստիպենդիաները) Տօնսկի համալսարանում տրվեն միայն բժշկութիւն սովորող երիտասարդներին, զրա փոխարէն պարտաւորացնելով նրանց որոշ թւով տարիներ ծառայելու գեներալ-նահանգապետի նշանակած տեղերում: Լրագիրը լսել է, որ Բոլորդրական լուսաւորութեան մինիստրութիւնը վերջին օրերս յարգել է յիշված դիմումը և վճռել է Տօնսկի համալսարանի իրաւաբանական ֆակուլտէտի 20 թղթակները յատկացնել բժշկական ֆակուլտէտի ուսանողներին:

ՁԱՆԱ-ՕՂԻԻՑ գրում են մեզ հետեւալը. «Այսօր, մայիսի 28-ին, Ջալալ-Օղլիի և Վօրօնցօվայ գիւղերի մէջ տեղը երկաց ամպի թաթառ, որ կախված երկնքից՝ շէկ գոյն ունէր: Նա պտոյտ գալով շարժվեց դէպի հարաւ: Մեր հասարակ ժողովրդի մէջ այդպիսի ամպը

կոչվում է վիշապ—«ուշաք» և տեղ-տեղ էլ «պոչ»: Թաթառը դնաց դէպի Չիբուխի ուսուցիչը, որտեղ բանդեց մէկ փայտաշէն տուն, մինչև յատակը, բայց արեց այդ տան ցորենի ամբարի գլուխը և միջի բոլոր ցորենը դուրս բաշեց վեր և չը թողնելով մէջը ոչ մի հատիկ և քանդեց բոլոր տները գլուխները ու բերան-միտները: Չիբուխի գիւղի մարդիկը փախան՝ դեռ պոչը նրանց չը հասած՝ պահպնելու գիւղի մօտ գտնվող բարափի տակ, բայց երբ տեսան որ բարափի քարերը քանդվում և ցած են գործվում, փախան այդ տեղից էլ վերև, գետի ափովը: Թաթառը վերցրեց մի ֆուրգօս տան դռնից և գեցեց բարափից ու կտորատեց: Չիբուխի գիւղի կրած վնասը շատ է, բայց ճիշդ դեռ չէ որոշված: Պոչը Չիբուխի ընկերուց յետոյ իր ընթացքը ուղղեց դէպի Ջալալ-Օղլի: Մեր ժողովուրդը մեծ երկիւղով տակ ընկաւ, բանասանները գլխաբաց գանգահարում էին մայր եկեղեցու դռնապանները. մարդիկ բարձրացել էին տանիքների վրա և նայում էին, թէ պոչը ինչպէս է դէպի մեզ գալիս սարերի վրայով, բայց, հող, աւազ բարձրացնելով, ճանապարհներից բարեբը շարժելով: Վերև յիշած ցորենի ամբարի մի մասը բերեց թափեց իմ հարեան խարսղ Վարդան Գեորգովի տան վրա: Բայց թաթառը մեր գիւղին չը հասաւ, մերձակայ սարի վրայով աւերուներ անելով բարձրացաւ դէպի երկնքը: Այդ երկոյթը մեզ անձանօթ է: Նա ժամանակ ժամանակ տեղի է ունենում մեր կողմերում: Մի թաթառ վեց տարի առաջ իջաւ. Լոռու Վարդաբլուրը գիւղի մօտ և ս. Սարգիս ուխտատեղի ահագին կարի ծառերը խնց արմատից և կ կտորատեց և արմատախիլ արեց կաղնիները:

ԳԱՆՁԱԿԻՑ մեզ գրում են. «Եղանակներն այժմ բաւականին լաւ են: Դաշտավայրում սկսվել է արդէն գարնի հունձը. շուտով կը սկսվի ցորենի: Եթէ անձրևները չը խանգարեն դաշտավայրում հունձը բաւականին աշող կը լինի թէ քանակով և թէ որակով:

ԻԳԻԻԻՑ մեզ գրում են. «Երևանի նահանգի Սուրբավու գաւառը այս տարվայ նման աննպաստ եղանակների զուգեց երբեք պատահած չը լինի, որով երկրագործութիւնը ահագին վնասի ենթարկվեց: Մայիսի 20-ից միայն երկիրը պարզեց, անձրևները դադարեցին և այդ օրվանից միայն սկսվեց դաշտային աշխատանքը: Սովորաբար բարձրակ ջանվում է մինչև ապրիլ ամսի 20-ը կամ վերջը, որից յետոյ ցանվածները յուսալի չեն կարող լինել. իսկ այս տարի թէպէտ մայիսը վերջանում է, բայց դեռ բարձրակ ցանքը չէ վերջանալու: Անձրևներ տեղացին անդառնալով, ամենաշատը երկու օր ընդմիջումով. շատերը չը կարողացան վարել, ոմանք վարածը չը կարողացան ցանել, ոմանք ցանածը չը կարողացան մարկոտել, ոմանք էլ մարկոտածը չը կարողացան տափանել և այլն: Այս դրութեամբ ցանածից լինի արդիւնք կարելի է սպասել աշխարհ, որի յոյսով ապրում են բոլոր թշուառ գիւղացիք: Յորդաւատ անձրևները առաջացրին նշանաւոր հեղեղներ, որից նոյնպէս նշանաւոր վնաս է հասնում երկրագործութեան»:

ԴԵՐԻՑԵՆԻՑ մեզ գրում են. «Էլմիածնի Դիւանի գիւղանպետ Կորին վարդապետի «Մշակի» էջերում նկարագրած Տրիփօն վարդապետը սրանից տան և հինգ օր առաջ ինքնանկով Իերեկոյում, մօտ տան օր հիւր մնալով պ. Մարգարէ Մարութանների ասնը, ապա ճանապարհովից Վարդապետի վրայով դէպի Արմաշի ու Նոր-Նախիջևան իր խաչագողութիւնը շարունակելու: Նրա պատեղից գնալուց յետոյ պարզվեց, որ յիշեալ կեղծ Տրիփօնը ճանապարհին մօտ երեք հազար ռուբլի փող է ժողովել Նախավայրի վանքում նոր բացվելիք որբանոցի համար: Նոյնպէս դիմել է նախկին միջոցներ խնդրելու նոյն նպատակի համար պ. Մ. Մարութանիանցին և ուրիշներին, բայց մերժում ստանալով, թողել ու փախել»:

**ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ**

ՊԵՏԵՐԱՉՄԻ ԾՈՒԹՅՈՒՆ

Յամագասան՝ Կուրապակիին մասին: Եւրոպայի բանակների ընդհանուր հրամանատար Եամագասան, «Times» լրագրի թղթակցի տեսնելով, ի պատիւ իրան տուած մի բանկէտի ժամանակ, պատասխանելով իրան ուղղած բարեմաղթութիւններին, ասել է. «Յանձին գեներալ Կուրապակիին, որի հետ ես ծանօթ

եմ արդէն 8 տարի, ես ունեմ մի լուրջ հակաակորդ, խորագէտ, տաղանդաւոր դեկավար: Գիւնըրայի ուղեգրական փորձառութիւնը, ինչպէս և ուսուց գործերի անձնագրութիւնը, նրանց ընդանգիւնութիւնը, բաշտութիւնը ինձ շատ լաւ յայտնի են, բայց այդ ամենը չէ կարող կասեցնել ինձ իմ նպատակից և մենք կը կուենք մինչև ամենավերջին մեր ոյժը և չենք վերջացնի այս արեւնապանգ կուրը, մինչև որ աշխարհիս երեսին կը գտնվի մի հաս եւպօնացի, ընդունակ գէնք կրելու: (P. A.)

Մուկդէնի չինական լրագիրը: Մուկդէնում հրատարակվում է չինարէն մի լրագիր, որի նպատակն է—ազգիլ ընդհանրի վրա և պահպանել նրանց մէջ ուսուական հեղինակութիւնը: Այդ լրագրի վերջին համարում տպւած է, թէ Եւրոպայի փորձեց երկրորդ փոխառութիւն կնքել Միացեալ-Նահանգներում 8,700,000 Ֆրանկի, բայց նրան չաջողվեց այդ բանը: Նախկին կուրի մասին ասված է, թէ ուսուները կորցրին այդ ճակատամարտը եւպօնացիների թուական գերազանցութեան պատճառով, բայց Ռուսաստանը շուտով կը թելադրէ հաշտութեան պայմանները Տօկիոյում: (H. A.)

Մեծ-Բրիտանիայի օտերը ուսու-եւպօնական պատերազմի մէջ: Մի բարձրատիման անգլիական դիպլոմատ մի յօդուած է տպել «United Service Magazine» լրագրի մէջ, որով քննում է Մեծ-Բրիտանիայի բաղաբաղական շահերը ներկայ պատերազմի մէջ: Նա ասում է. «Անգլիայի ապագան ցանկալի է դարձնում, որ Ռուսաստանը կատարեալ պարտութիւն չը կրէ, բայց և փառաւոր յաղթութիւն չը տանէ, այլ փոփոխական և դժուար կուեց յետոյ կնքէ անվճարական հաշտութիւն: Մեծ-Բրիտանիայի իսկական շահերը պահանջում են, որ Ռուսաստանը յոգնեցուցել կուեց յետոյ պահէ իր ձեռքում Մանչուրիան Պօրտ-Արտուրի հետ միասին, բայց այնպէս որ միշտ վախենայ իր տիրապետութեան յարաբերութեան մասին: Միայն այդ դէպքում, երբ Հեռաւոր-Արևելքը երկար ժամանակ կը զբաղեցնէ և կը կապէ Ռուսաստանի դիպլոմատիական ուշադրութիւնը և կը գրաւէ նրա զինուորական ու ծովային ընտանրները,—մի բան, որ հնարաւոր է, եթէ Եւրոպայի իբրեք վարձատրութիւն ստանայ Կօրէան և Մանչուրիայի սանձանում պահակ դառնայ,—միայն այդ դէպքում, Մեծ-Բրիտանիան կարող է այլ ևս չը մտածել իր հնգկական սանձանների մասին և անարգելը շարունակել իր բաղաբաղական զորքացումը: Եթէ ուսուները փառաւոր յաղթական ճակատանքստ տանեն և եւպօնացիներին շարտեն ստիական ցամաքից, այն ժամանակ անգլիական բոլոր շահերը Հեռաւոր-Արևելքում կը վնասվեն, իսկ այդ շահերը ձգտում են դէպի Եանցէլիանգի հովիտը և Քիւսաստանի Կվանչունեան նահանգները: Միև կողմից ուսուց տիրապետութեան հաստատութիւնը Մանչուրիայում կը խափանէ Եւրոպայի չափազանց տարածումը: Թէև Մեծ-Բրիտանիան ազնուութեամբ է վերաբերվում անգլո-եւպօնական դաշնակցութեան և իր անկեղծութիւնը իբրև պատրոյց պատրաստ է ավաղել Եւրոպայի պրօպրէ-նի, բաղաբաղական բարգաւաճման, անտեսական բարեկեցութեան շաղկում, ինչպէս և նոյապակ նրա կուլտուրական-պատմական միասնային Կօրէայում, այնու ամենայնիւ բրիտանացիները երբեք հակուեն չունեն դառնալ միայն յեռնակէտ, որի վրա երիտասարդ պետութիւնը կարողանայ շրջի ծաղիկներ արձակել և դառնալ հզօր պետութիւն ասիական ցամաքի վրա: Այդ պատճառներով, անգլիական տեսակէտից, անգլիայի չէ այնպիսի հաշտութիւն, որ տար Եւրոպայիային այդպիսի հզօր և ծաղիկալ պետութիւն դառնալու միջոցը: Ի վերջոյ—ցանկալի է շիտակ հաշտութիւն, որ արդարաբար բաժանել երկու պատերազմողներին մէջ վիճելի երկիրները—Մանչուրիան և Կօրէան»: Ուրեմն, անգլիացիները հետևում են հին դէպի—«Divide et impera», «Բաժանեա, դի տիրեցես»: (HOB.)

Ռուսները շատ գոն են: Պարզիլ լրագրիչներին հեռագրում են Պետերբուրգից, որ վերջին օրերս Պետերբուրգի զինուորական շրջաններում շատ գոն են զլիւաւոր բանակաւորից ստացված լուրերով: Ռուսներին աշողվել ամուր կերպով հաստատվել Միւսսոնում և եւպօնացիները շատ մեծ դժուարութեամբ կը կարողանան գրաւել այդ ուղեգրիտական կէտը: Այդ կէտը պահելով, ուսուները հնարաւորութիւն կունենան պատրաստվել շարժվելու Պօրտ-Արտուրի ազատութեան համար: Շտակելիքը և Կելլեր գեներալները հնար են գըտել Պօրտ-Արտուրի հետ յարաբերութիւն պահպանելու: Այս օրերս գեներալ Կուրապակիին

ուղարկել է լաիօնական հեռագիր. «Կատարված է», որ անկասկած, ահագին նշանակութիւն ունի: (H. A.)

Ռուսաց գործի երեսումը Գեներալու: Ռուսաց գործի երեսումը Գեներալու մեծ յուզմունք առաջացրեց Եւրոպայում: Այժմ գէնքի կոչվող շարքերը բանակի 1 և 2-րդ դիվիզիաները սահմանվում են Գէնգան ուղարկվելու: Նախնի յարձակման ժամանակ եւպօնացիները 30 մեծ պաշարողական և մինչև 250 դաշտային թընդանօթներ ունէին: Յայտնի է, որ բայց «Մատցուգէ» դրամաւորից եւպօնացիները նոյն օրը կորցրին մի ուրիշ դրամաւոր, որ ընկղվեց Պէչլիւան ծոցում: Եւպօնական հիւպատոսը զրահաւորի անկման վայրը յայտնեց փոստաւոր նաւագնացութեան համար և դրել է այդտեղ դրօշակ. ընկղված դրահաւորի սպասաւոր մարմինը փրկված է: Տօկիոյում գտնվող պատերազմական թղթակցիցները այժմ թղթուութիւն են ստացել գնալ դէպի Պօրտ-Արտուր: Այդ հանգամանքը առիթ է տալիս եզրակացնելու, որ շուտով եւպօնացիները կը սկսեն գրոհ տալ Պօրտ-Արտուրի վրա: Նրա շուրջը կենտրոնացած է 70—հարաւան մի բանակ և 50,000 պահեստի զօրք: (T. A.):

Պօրտ-Արտուրի վիճակի մասին տեղեկութիւնների բացառապէս ստացվում են Չիֆուցի, չինացիների միջոցով: «Times» լրագրի թղթակցիցը, որ իր սեփական շոգնաւոր պտոյտ է գալիս Վէյխաւից և էլիտեան կղզիների միջև, հեռագրում է, թէ ոչ մի հնարաւորութիւն չը կայ ստանալ որ և է ճիշտ լուր Պօրտ-Արտուրից: Մի ընդարձակ առաջնորդող յօդուածի մէջ «Times» տընում է սպացուցանելու, որ բալտիական նաւատորմը այս ամառ ոչ մի դէպքում չէ կարող դուրս գալ իր ջրերից: (Вирж. Вѣд.):

Մօսկվայի հիւսիս-ամերիկական հիւպատոսների եղբայր Սմիլը վերադարձել է Պետերբուրգ և պատմել «Times» լրագրի ներկայացուցչին, թէ նա նոր է վերադարձել Պօրտ-Արտուրից և կարծում է, որ եւպօնացիներին չի աշողվել վերցնել բերբը առանց մարդկանց ահագին կորստի: «Ելք են դուրս եկայ Պօրտ-Արտուրից—պատմում է նա— ուսուներ այդտեղ կային 38,000 հոգի: Նրանք ամենքը լցված են արիւթեամբ և կայտառութեամբ և պատրաստ են ամեն բան դոնել բերդի պաշտպանութեան համար: Բոլոր բարձրութիւնները Պօրտ-Արտուրի շուրջը զօրեղ ամրացրված են խրամատներով և պատնէշներով: Արտիլլերիական բաւարեաների համար տեղերը ընտրված են գործի կատարեալ հմտութեամբ: Ես հաշուեցի 3000—4000 թընդանօթներ: Եւպօնացիները կը կարողանան վերցնել Պօրտ-Արտուրը միայն այն պայմանով, եթէ ոյժերի ճնշող գերազանցութիւն ունենան, կամ ուսուներին յանկարծակի բերեն: Պաշար ուսուները ունեն 4/2 տարվայ համար: (Рыс. Вѣд.):

«Կիօնի լրագիրը» ցոյց է տալիս այն դժուարութիւնները, որոնք պէտք է յայտնվեն, երբ բալտիական նաւատորմը գնայ Հեռաւոր-Արևելք: Ամենից առաջ նաւատորմին անուխ հայթայթելու կղանակը կը դանդաղեցնէ նրա ընթացքը երկու-երեք ամսով աւելի, քան այդ կը լինէր գործերի կանոնաւոր դրութեան ժամանակ: Մինչև նաւատորմի դալը, վաճկվել լուսուցիկ նաւահանգիստը արդէն կը ծածկվի սառուցով և, այդպէս միայն անպայման հաւատացած լինելով թէ Պօրտ-Արտուրը կարող է դիմաւալ մինչև աշունը, բալտիական նաւատորմը կարող է դուրս գալ: Երբ վաղ դիվիզիոնի նաւահանգիստը կը ծածկվի սառուցով և եթէ Պօրտ-Արտուրը կընկնի եւպօնացիների ձեռքը, այդ դէպքում բալտիական նաւատորմի դրութիւնը կը լիտիքական կը լինի: Եթէ այդ ժամանակ նաւատորմը հասած կը լինի Սայգան, Ֆրանսիական չէզոքութիւնը իրստ փորձութեան պէտք է ենթարկվի և նաւատորմը պէտք է յետ դառնայ, իսկ այդ ժամանակ բալտիական ծովը էլ կը ծածկվի սառուցով: Եւ այդպէս, լրագրի կարծիքով, եթէ Պօրտ-Արտուրը ընկնի մինչև զարկի և կը մնայ իր տեղը մինչև յաշտութիւն կարգապահական շրջանը: (С. Пет. Вѣд.):

Մանչուրական բանակի առաջ դիվիզիոն կայ: «Daily News» լրագիրը ցոյց է տալիս, որ մանչուրական բանակի առաջ մի ծանր դիվիզիոն կայ: Պօրտ-Արտուրը փրկելու յաղթական շարժման համար հարկաւոր է 100 հազարից ոչ պակաս զօրք, բայց դրա համար պէտք է պաշտպանութեան հասուն և հիմնաւոր պլանները հիւսիսում խանգարվեն և բա-

Նակի կենտրոնացման փոխարէն պէտք է թուլացնել նրան կտոր-կտոր անելով, մինչդեռ Պօրտ-Արտուրի նշանակութիւնը Ռուսաստանի համար աւելի լուրջ է քան Հոնկոնգի նշանակութիւնը Անգլիայի համար: Թողնելով իր պաշտպանողական գիծը հիւսիսում և շարժվելով դէպի հարաւ, մանջուրական բանակը պէտք է վտանգի ենթարկվի ձախ թևի վրա, հուրովի բանակի կողմից: Սյուլիսով զիջելով ման հետեւեալ ձևով է ներկայանում. փրկելով Պօրտ-Արտուրը, եթէ ժամանակը բաց չի թողնուի, ուստայ բանակը կարող է կորցնել Մանչուրիան: (Рыс. Вѣд.):

**ՆԱԽԱԿ ՊԱՐՏԱԿԱՆՆԵՐ**

Քաղաքի, մայիսի 15-ին

Ղալա-Բերդաթաղի «Արամեան և Ս. Աննայան» երկսեռ ուսումնարանը բաւական հին պատմութիւն ունի. 1850-ական թուականներին յայտնի Սաթուրեան Սահակ եպիսկոպոսը Արարկատականի առաջնորդութիւնը Մակուի Թաղէոս Առաքելալի վանքից փոխադրում է այստեղ՝ Թաղի: Գործունեայ եպիսկոպոսը, առաջնորդարանի այժմեան շինութիւնը կառուցանելուց յետոյ, ձեռք է զարնում և ուսումնարանի շինութիւնը. 1851 թուին շինում է Արամեան ուսումնարանը, իր ժամանակի համար մի նշանաւոր շէքը, որ հետզհետէ վերանորոգվելով և ընդարձակվելով նոր բաժանմունքներով դարձել է այսօրվայ յարմարաւոր շինութիւնը: Եթէ մեծ ու փոքր դասարաններ, ուսուցչանոցը, տեսչի սենեակը և քանդակարարները գտնվում են երկու ընդարձակ բակերի շուրջ, որոնք ծառայում են աշակերտներին իրեն զբոսատեղի: Ի պարտք ունի ընդարձակ հորիզոն, և միայնակ լինելով՝ առողջապահական յարմարութեան կողմից ետ չէ մտում Լիլաւան թաղի զպրոցի փառաւոր շինութիւնից: Կայն հորիզոն ունենալով զպրոցի մի խոշոր առաւելութիւնն ենք համարում, որովհետեւ, այստեղ, մասնաւոր բերդաթաղում, բոլոր աները խիստ ցած են փողոցից և շատ նեղ հորիզոն ունեն: Անսովոր մարդու համար աները մի մի բանտ են, ուր իջնում են 5—10 աստիճաններով: Արամեան զպրոցը փողոցի մակերևոյթից բարձր է և խոնամութեան նշան չունի ամենևին:

Օրիորդաց մասը—Ս. Աննայան զպրոցը— շատ ուշ ժամանակում է շինվել. այն ժամանակ, երբ Արամեան զպրոցը շինութեան գործն էր գլուխ գալիս, ձվ էր մտածում աղջիկների մասին անպատ, ուր մնաց թէ նրանց կրթութեան մասին հոգային. չէ որ այնտեղի մի բուն հայերը լեզուից և կրօնից զատ ամեն բանով թուրք էին այն ժամանակ. և ձվ գիտէ եթէ մտածէին էլ, թուրք տարրը ինչ խալտառակ օյիններ պիտի սարբէր զպրոց յաճախող աղջիկների զլինին, բանի որ այժմ էլ նոյն իսկ երբեքս լինում են դէպքեր:

Օրիորդաց ուսումնարանի յարմարաւոր շինութեան ուշ ժամանակում շինվելն էլ ցոյց է տալիս, որ պահանջը շատ ուշ է զգացվել: Ներկայ շէքը շինվել է 1887 թ. Թաղիցի-ներից դեռ ևս չէր մտաւորված Շիրակեցի Ստեփան եպիսկոպոս Միթիթարեանի օրով՝ Թուսանեանների ծախսով. շինութիւնը յարմարեցրած է առողջապահական բոլոր պահանջներին: միայն՝ որովհետեւ բակը բին փոքր է, պարագամուրը, դասերի ժամանակ կարող է խանգարվել. երբ պատուհանները բաց են մնում, հարեան դասարանի անցած դարձածը լավում և տեսնվում է:

Այս զպրոցների նիւթականը ապահովում են բազմաթիւ կարկատաններով. չունի մի հաստատուն եկամուտի աղբիւր, և այդ պատճառով էլ հոգաբարձութիւնը ամեն տարի գանազան հնարքներ բանեցնելով՝ հաշիւը մի կերպ փակում է և ուսուցչիներն ուսիկը կանոնաւորապէս վճարում է: Եկամուտն զլիսաւոր աղբիւրներն են. դրամագլխի տոկոսը, եկեղեցու սեփականութիւնից յատկացված օժանդակութիւնը, ներկայացումներից և թատերաբանից ստացած արդիւնքը, աշակերտների թոշակաւորումը՝ (3—9 թիւանով). վիճակաւորներից ստացած արդիւնքը, Վարկանո թագաժողովի տարեկան նուէրը՝ 160 թուան (300 ռուբլի). ուստայ հիւպատոսի իրենուստայ վերուի ուսուցչի ուսիկ վճարած 500 ռուբլին և ուրիշ պատահական նուէրներ: Հոգաբարձուները Հ հոգի են, չորրորդն է զպրոցների տեսուչը, որով զպրոցների նիւթական և ուսումնական մասերի շարկապահն է ստաջ գաւթի: Մանկավարժական կարգադրութիւնները թողնված են ուսուցչական ժողովին. իսկ ինչ վերաբերում է դասարանական փոփոխութիւն-

ներին—աւելացնելուն կամ դարձնելուն—այս թողնված է հոգաբարձուներին, և անհրաժեշտ է այս առթիւ եղած որոշումների մասին հարցնել և տեսչի կարծիքը, ահա այս մտադրութիւնով է, որ նրան էլ են ընդունել հոգաբարձական կազմի մէջ: Պարտաճանաչ չի հետ, առանց ձանձրանալու երկար տարիներից ի վեր աշոգութեամբ առաջ են տանում հայկական զպրոցի, այն էլ Պարսկաստանում, դժուարին գործը, որի համար երբեքս ուղղակի հնարագիտութիւն է հարկաւոր, թէ ինչ նոր միջոցներ գտնել է հարկաւոր, որ նոր սկսված ուսումնական տարին էլ աշոգ վերջանայ, և, եթէ հնար է, դասարանների թիւը բարձրանայ:

Ուսուցչական կազմի մասին այս պէտք է ասել, որ մի մասը փորձված մարդիկ են, իսկ միւսը թարմ և դեռ ևս անփորձ ուսուցիչ են, որոնց մասին մի եզրակացութիւն հանել դեռ վաղաժամ է. միայն յաճախ նրանցից լսում ենք տրտուճներ Գ. բաժանմունքի և Ա. դասարանի մասին, որոնցից առաջինում 55 և երկրորդում 63 աւուցիչներ, մինք էլ համաձայն ենք, որ նրանց համար շատ դժուար է 60 փոքր երեխաների բան հասկացնելը: դժուար է կարգ պահպանել: Այս մեծ անյարմարութիւնը, որ իրան թոյլ է տուել հոգաբարձութիւնը, նիւթականի անձուկ լինելու պատճառով է: Ի նկատի առնելով, որ միւս թաղի զպրոցը փակված է, և օտար բարդիչների զպրոցները հետզհետէ իրանց ծրագրերը ընդարձակում են, հոգաբարձութիւնը կարևոր համարել մի մի դասարան աւելացնել, բանաւորով տղայաց Ե. դասարան և օրիորդաց Գ. Բայց այս բանի համար եղած նիւթականը չէր բաւականանում, ուստի մնում էր դասարաններ միացնելով, մի և նոյն թւով ուսուցչիները աւելի ժամեր շահել, և յատկացնել բացվելիք դասարաններին: Չը հաշւած զպրոցի մի բանի պակասութիւնները—որոնք մասին յետոյ կը տեսնենք—այս երկու բազմամարդ դասարանների միացումը մանկավարժական և վարչական միակ խոշոր պակասութիւնն է. արժէ աւելի ծանրանայ այս կէտի վրա, որպէս զի գտնէ եկող տարի նոյն անյարմարութիւնը չը կրկնվի: Վնասը կրկնակի է լինում. այս բանի համար մէջ եմ բերում նորեկ ուսուցչի խօսքերը, որ յոգնած վերադառնում էր այդ դասարաններից—եղբայր, պարագիլ չի լինի այդ խաժամուժի մէջ. ոչ մինք ենք կարողանում կանոնաւոր մի բան անցնել, ոչ էլ նրանք կարող են սովորել. այդ երկու դասարաններում մեթոդի մասին էլ չենք կարող մտածել. մեր բնական մեթոդն էլ է փչանում: Իմ կարծիքով շատ իրաւացի է այս նորեկ և անփորձ ուսուցչիներին գանգաւոր:

Ի պատիւ տեսչի և ուսուցչական խմբի պէտք է ասել, որ ուսումնական տարին վերջանում է ահա, և ոչ մի անախորժ միջոցառչ չէ պատահել. ամեն տարի մի քանի անհամ զէպրեր եղել են միշտ, որ խոսակցութեան առարկայ են դարձել և իրանց վարչիկ ձգել են ժողովրդի առաջ: Այս տարի, թէ և կազմը կիսով փոխվեց, բայց տեսչի փորձառութեան և անդամների գիտակցութեան շնորհիւ դարձեալ չը կրկնվեցին նախորդ տարիների անվայել զէպրերը: Ներկայ խմբի մեծամասնութիւնը կազմված է ձեռնարանական և ձեռնարանաւոր երիտասարդներից. դժբաղդաբար համարաշխարհիւն չունեն. չունեն և անձնավաստանութիւն, որով և այս կամ այն կերպ չեն աշխատում մասնակցութիւն ցոյց տալ հասարակական գործերի մէջ: Այս բանը գուցէ մասնորոշ և անձանօթ տեղի պայմաններին: Եկող տարի, ուսուցչական կազմի անփոփոխ մնալու դէպքում, աւելի եռանդ և գործունէութիւն է պահանջվում նրանցից, շատ երկչոտ են. նրանց զրգել է հարկաւոր:

Ամփոփելով մեր ասածները զպրոցների նիւթականի և ուսուցչական կազմի մասին, եզրակացնում ենք, որ բացի յիշած պակասութիւններից, ուսումնական գործը աշոգ է ընթանում. բոլոր ուսուցչիների կարծիքով միացեալ երկու դասարանների առաջադիմութիւնը անբաւարար է, բայց միւս գասարանները կանոնաւոր են, և աչքի ընկնող ուրիշ անհարթութիւն չէ նկատվում: Բայց այս մասին միւս անգամին:

Նորեկ-Իգ.

**ԱՐՏԱՒԻՆ ԼՈՒՐԵՐ**

Փրանսիական պատգամաւորների ժողովում, մինիստր Դէլկասէ, պատասխանելով պատգամաւոր Պրէսանսէի հարցին Հայաստանում տեղի ունեցած թիրբական գաղանթութիւնների վերաբերմամբ, ցոյց տուեց, որ Բելլիինի գաղանթի ժամանակից Փրանսիան մի քանի անգամ օգնութիւն է արել իրադրուէրու այդ գաղանթի այն յօդուածները, որոնք վերաբերում են Մակեդոնիային: Ինչ վերաբերում է Հայաստանին, Փրանսիան աւելացրել է իր գործակալների թիւը նրա գնաւորան շրջաններում: Մի և նոյնը արել են Ռուսաստանը և Անգլիան: Իր ձառի շարունակութեան մէջ Դէլկասէ ցոյց տուեց, որ հիւպատոսների ներկայութիւնը Հայաստանում մեծ թեթևութիւն էր նրա ազգաբնակչության համար: Եթէ Բ. Դոան—շարունակեց մինիստր—չէ կարելի մերժել իրաւունքը նրա՝ հողի վրա բնակված պատգամաւորները ճնշելու, միւս կողմից նրան կարելի է յանդիմանել այն բանի համար, որ նա պաշտպանում է թիրբիայում այնպիսի վարչական սխտեմ, որի ժամանակ պատգամաւորութիւնները միակ փրկութիւնն են ազգաբնակչության համար: Մինիստրի ասելով, միջոցներ են ձեռք առնված, որ հիւպատոսները Մուշում մնան իրանց տեղը և հարորդեն այն ամենը, ինչ այնտեղ կատարվում է: Բացի դրանից, Գ. Պօլի ֆրանսիական զեպրանին հրամանագրված է բանակցութիւն ունենայ միւս գեպալաների հետ և կառավարութեան ուղղութիւնը դարձնել, որ խիստ միջոցներ այլ ևս չը պիտի լինեն և այժմ բանը միայն այն է, որ օգնութիւն հասցնվի անմեղ ֆրանսիական և որ օսմանեան կառավարութիւնը չը պիտի կարծէ, թէ պատասխանատուութիւնը նրա վարձուքի համար—մի դատարկ ձայն է: (Տօր. Ար.)

Գ. Պօլից հետագրում են «Ռուսաց գործակալութեանը». «Անգլիական, ֆրանսիական և ուստայ գեպալաները խոտաւորել խորհուրդ էին տալիս երէկ Բ. Դոան չը թոյլ տալ բրանութիւններ Բիթլիսի վրայէն: Կառավարանական կարգութիւնները ճնշելու ժամանակ Բ. Դոան խոստացաւ կրկնել իր նախկին հրամանագրութիւնները»:

**«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐԸ**

ՌՈՒՍԱՅ ԳՈՐԾԱԿԱՂՈՒԹԻՒՆՆԵՐ

1 յունիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Գինեբալ-աղբուսանտ կուրօպատիկի հետագրերը Նորին Մեծութեան 1904 թ. մայիսի 31-ին. «Այսօր մայիսի 31-ին առաւօտեան իմացվեց հապոստայինի արշաւանը Պուլեանդեանից դէպի հիւսիս: Յերեկվայ ժամը 2-ին յայտնի դարձաւ, որ յարձակման ճակատը Վանդեզուս դիւղի մօտն է մինչև Տասախո գետի հովիտը և յարձակվողները ընդհանուր թիւը երկու դիւղիներ է, որից մէկը ընթանում է Տասախո գետի հովիտով: Ժամը 4 և 30 րոպէին թշնամին կանգնեցրեց արշաւումը, գրաւելով Տասախո գետը, Չասնչեատուն և Լինձեատուն գիւղերը և բարձրութիւնները Վանդեզուսից հարաւ: Մանրամասն տեղեկութիւններ մեր կորուստների մասին մինչև այսօր ևս չեմ ստացել: Վիրաւորված են հարեւրապետ Չերեպալսինը և մի քանի զինուորներ: Ստացված տեղեկութիւնների համաձայն այսօր չէ երեացել հապոստայինների արշաւումը Սիււանից դէպի Դօլինսիան անցքը»: Գինեբալ Սարկիվիչը հետագրերը զլիսաւոր շտաբին մայիսի 31-ից. «Մայիսի 30-ին գիշերը Վաֆանդեան կայարանից դէպի հարաւ և Բիցիլի-Պուլեանդեան գծից դէպի հիւսիս, հապոստայիններ յարձակվեցին մեր պահակախոցի վրա Ուղեաղէն գիւղի մօտ, բայց յետոյ, որ տեղը մինչև առաւօտ մեր զօրախումբը գրաւեց կիրքը և բարձրութիւնները Լիբիատուն գիւղի մօտ: Մեր կորուստները գիշերային այդ գործողութիւնների ժամանակ չորս սպանված և 18 վիրաւորված զինուորներ են: Մայիսի 26-ին, երեկոյան, պարտիկ Լանգ, որ ուղարկված էր խուզարկութեան Ուղեաղէնից դէպի հիւսիս արեւելք, ենթարկվեց յարձակման հապոստային զօրախմբի կողմից, բազմաթիւ երկու վաշտից և ձեռնամարտից յետոյ կարողացաւ ձգրել ու անցնել: Ստացված տեղեկութիւնների համաձայն, 3000 հոգուց բաղկացած մի հապոստային զօրախումբ արշաւում է Սոււայթեանիւրին վրա, հարաւից»: Տօնի: (Բէյտ. գործ.): Երէկ երեկոյան երբ «Տասախո» փոխարկական նաւը աւանդներ էր գնում Պօրտ-Արտուրի նաւահանգստի մոտը, ահանդերից մէկը պայթեց: Սպանված է մի օֆիցէր և 18 նաւաստի, վիրաւորված 9 հոգի: Նաւը թեթև կերպով ֆուսկեց: Տօնի: Ջրառողջ եղած «Վարեալ» կէտէսերը բարձրացնելու աշխատութիւնները ա-

ղողութեամբ առաջ են տարվում: ձեղբերը արդէն փակված են: Յոյս ունեն մինչև սեպտեմբեր կարգի բերել նաւը:

2 յունիսի

ՄՈՒԿԻՆ: Պօրտ-Արտուրը պաշարող եսպոսական բանակը գտնվում է Ինչինձի—Լուսիլանդան գծի վրա: Առաջապահ մասերի միջև տեղի են ունենում հրաձգութիւններ: Պօրտ-Արտուրի վրա գրեթէ տարւո լուրերը չեն հաստատվում: Իմացվել է, որ հապոստայինները արշաւում են Պուլեանդեանից դէպի հիւսիս: Տեղի ունեցած ընդհարման ժամանակ, Վաֆանդուսի մօտ թշնամին յետ մղվեց մեր առաջապահ մասերից. կորուստները անյայտ են: ԼՕՆ.ԳՕՆ: (Բէյտ. գործ.): Համայնքների ժողով: Այն հարցապնդումին, արդեօք Կօրէան ճանաչվում է կախումն ունեցող պետութիւն, արտաքին գործերի մինիստրի օգնականը պատասխանեց դրականապէս: Ժողովը անդամներից մէկի հետեւեալ հարցին՝ արդեօք անմիջապէս կը դադարէ Անգլիայի դարձակալական իրաւունքները Վէյլայվէյ վրա այն դէպքում, երբ Պօրտ-Արտուրը կը գրաւուի ուրիշ որ և է մի պետութեան կողմից, բացի Ռուսաստանից, լօրք Պրէսին պատասխանում է, թէ 1898 թ.ին կրթված դաշնադրութեան համաձայն, Չիւստատան տուել է Մեծ-Բրիտանիային վարձակալական իրաւունքներ Վէյլայվէյ վրա և այդ պօրտին կից Չրային տարածութեան վրա մինչև այն ժամանակ, որչափ Պօրտ-Արտուրը կը գտնվի Ռուսաստանի ձեռքում:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Գինեբալ-Լէյտնանտ բարձու Շտաբլեիզի հետագրերը 1904 թ. յունիսի

1-ից. «Այսօր, օրվայ ժամը 12-ից, սկսվեց կռիւ Վաֆանդուս կայարանից 6 վերստ դէպի հարաւ դիրքի վրա: Թշնամին սաստիկ փորձեր էր անում յետ մղել մեր ձախ թևը: Թշնամու յարձակումները յետ են մղված: Մենք պահեցինք մեր դիրքը: Առաջին գունդը, որ գիշերէ ձախ թևի վրա էր, ծանր կորուստները կրեց սպանված է գնդի հրամանատար գնդապետ Սիւստունովը և գնդալին թիկնապահ պօղպօրուչիկ Դրաքօզով Նարտօյիսիկին. գնեբալ Գինեբալը վիրաւորված է ներքին ծնօտից, բայց մնացել է կազմի մէջ»:

ԲԵՐԼԻՆ: «Լօկալ—Անցայգէր» թերթի պատերազմական աշխատակիցը, որ առաջ ծառայում էր ուստայ բանակում, պաշտօնաթող գնեբալ-ուայօր կոմս Պֆէլլը ասում է, թէ յաճախ արտայայտված այն կարծիքը, իբր Պօրտ-Արտուրը կառնվի մօտ ժամանակում գրեթէ տարւոյ, բոլորովին անհասկանալի է: «Բերլը, բաշ և կռիւների մէջ փորձված հրամանատարի, գնեբալ Ստեանիլի հրամանատարութեամբ, գրում է կոմս Պֆէլլը, ամբողջ ամիսներ կը գնանայ առանց դրսի որ և է օգնութիւն, մինչև այն ժամանակ, երբ խնդրել լուծումը կը կայանայ մի այլ տեղ»:

ԼՕՆ.ԳՕՆ (Բէյտէր): Համայնքների ժողովը

Այն հարցապնդման, արդեօք Անգլիայի և Ռուսաստանի մէջ կատարվող բանակցութիւնները համաձայնութիւն կայացնելու համար, հիմնվում են նախ հիմունքների վրա, ինչպէս և անգլո-ֆրանսիական համաձայնութիւնը, առաջին մինիստրը պատասխանեց բացասաբար: ԳԻՆԵԲԱՅԻՆ: Թագաւորի առողջութեան վերականգնումը:

ՍՕՅԻՍ: (Ընդգրկուաղբը շրջաններից). Սերբիական Պետր թագաւորը այցելութիւն կը տայ բօլգարական իշխանին վերջին ամառայինը բնակավայրում: Այցելութիւնը մասնաւոր բընաւորութիւն կունենայ:—Շնորհիւ մի միլիտե ֆրանկի, որ բօլգարական կառավարութիւնը փոխ է տուել փախտականներին, նրանք վերադառնում են Արլիանօպոլի վրայէն: Վերջինները վերահաստատութիւնը շարունակվում է: Մակեդոնիայից հաղորդում են, որ թիրբաց իշխանութիւնները միջոցներ են ձեռք առել ապահովացնելու անվտանգ ճանապարհորդութիւն երկաթուղով: ամեն մի գնացքին ուղեգրում են զինուորներ. ազրանքները և բազմաթիւ ենթարկվում են նախնական քննութեան:

ՊԱՐԻՉ: Նշանակված է յանձնաժողով կարտէզալներին գործը ըննելու համար:

2 յունիսի

ԳԻՆԵԲԱՅԻՆ: Անգլիական արշաւանքին դիմադրած տիրէական ոյժերը համարում են 7—8000 հոգի: շտաբը հրացաններ ունենալ Ի նկատի ունենալով նրանց ցոյց տուած քաշութիւնը, պարզ է դառնում, թէ ինչու անգլիական փոքր պահակախումբը պէտք է սահմանափակվի պաշտպանողական տակտիկայով: Սպասում են, որ գրութիւնը շուտով կը փոփոխվի, Ի նկատի ունենալով, որ անգլիացի-

